

ԹՈՒՐԻՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆ (2023)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ	3
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
1.1 Մոնիտորինգի հիմնական նպատակը եւ շրջանակը	5
1.2 Մոնիտորինգի սպասվելիքի հետևանքները եւ հիմնական հարցերը	6
2. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆ	7
2.1 Զարգացման համայնքի առաջնությունները 2023 թվականին. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	7
2.2 Զարգացման համայնքի ԿԱՏԱՐՈՒՄԸ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՏՈՒԿ ՈՒՐՏՆԵՐՈՒՄ և ՀԱԾԿԻ ԱՐՆԵԼՈՎ ԿՈՆԿՐԵՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	10
2.2.1 Ոլորտ A. <i>ցկյանս ուսումնառության հնարավորություններ՝ հասանելիություն և մասնակցություն</i>	10
2.2.2 Ոլորտ B (1). <i>ցկյանս ուսումնառության արդյունքները՝ որակ և համապատասխանություն</i>	13
2.2.3 Ոլորտ B (2). <i>ցկյանս ուսումնառության արդյունքները՝ գերազանցություն և նորարարություն</i>	16
2.2.4 Ոլորտ C. <i>համակարգի կազմակերպում</i>	19
2.3 ԻՆՉՊԵՍ ԵՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՕԳՈՒՏ ՏՎԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐԻՆ	22
2.3.1 <i>Իգական սեռի սովորողներ</i>	22
2.3.2 <i>Անապահով սովորողներ</i>	23
2.3.3 <i>Երկարաժամկետ գործազուրկ, տնտեսապես ոչ ակտիվ և ցածր կրթական մակարդակ ունեցող բնակչություն</i>	24
2.3.4 <i>Սովորողներն ըստ ծագման երկրի</i>	25
3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՅՈՒՆՆԵՐ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	26
3.1 ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐՈՒՄՆԵՐ	26
3.2 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՏԵՐԻՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ, ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՓՈՎԿՈՒՄՆԵՐ	27
3.2.1 <i>Սահմանումներ և տերմինաբանական պարզաբանումներ</i>	27
3.2.2 <i>Մեթոդական սահմանափակումներ</i>	28

Չեկույցի բովանդակությունը հանդիսանում է բացառիկ հեղինակների պատասխանատվությունը և պարտադիր չէ, որ արտացոլի ԵԿՀ-ի կամ ԵՄ կառույցների տեսակետները:

© Եվրոպական կրթական հիմնադրամ, 2023

Վերարտադրությունը թույլատրվում է աղբյուրը նշելու պայմանով:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Թուրինի գործընթացի այս մոնիտորինգն իրականացվել է Հայաստանի ազգային իշխանությունների, փորձագետների և շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ՝ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ տիկին Արմենուհի Պողոսյանի համակարգմամբ, որը նաև Թուրինի գործընթացի ընթացիկ փուլի Հայաստանի ազգային համակարգողն է:

Եվրոպական կրթական հիմնադրամը (ԵԿՀ) ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի ազգային իշխանություններին, տիկին Արմենուհի Պողոսյանին և բոլոր ազգային շահագրգիռ կողմերին իրենց անգնահատելի ներդրման և այս մոնիտորինգի իրականացման համար ճշգրիտ և ծավալուն տեղեկատվության տրամադրման համար:

Մոնիտորինգի սույն զեկույցը կազմել է ԵԿՀ մարդկային կապիտալի զարգացման ավագ փորձագետ և համակարգային փոփոխությունների և ցկյանս ուսումնառության համակարգող Միխայլո Միլովանովիչի գլխավորած խումբը: Չեկույցը կազմվել է նույն թիմի կողմից մշակված մոնիտորինգի սեփական մեթոդաբանության համապատասխան և հիմնված է ԵԿՀ-ի և Հայաստանում ազգային շահագրգիռ կողմերի կողմից հավաքագրված, մշակված, վերլուծված և ստուգված տվյալների վրա տիկին Արմենուհի Պողոսյանի՝ որպես Հայաստանում Թուրինի գործընթացի ազգային համակարգողի ընդհանուր համակարգմամբ և Արայիկ Նավոյանի՝ որպես Հայաստանի ազգային փորձագետի ներգրավմամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Համակարգի կատարողականության մոնիտորինգի շրջանակ.** Թուրինի գործընթացի մոնիտորինգն ընդգրկում է ցկյանն ուսումնառողների հետ կապված պարտավորությունների երեք հիմնական ոլորտ՝ ուսուցման հասանելիություն (Ոլորտ A), ուսուցման որակ (Ոլորտ B) և համակարգի կազմակերպում (Ոլորտ C): Այս ոլորտները բաժանված են մոնիտորինգի ութ չափայնությունների. հասանելիություն և մասնակցություն ոլորտ A-ում, որակ, համապատասխանություն, գերազանցություն և նորարարություն ոլորտ B-ում, և համակարգի կառավարում/վարչարարություն և ռեսուրսներ ոլորտ C-ում:
- **Հասանելիություն և գրավչություն.** Ինչպես այլ երկրներում, ՆՄԿՈՒ-ն շատ ավելի հասանելի և գրավիչ է թվում, քան ՇՄԿՈՒ-ն, սակայն Հայաստանում ՄԿՈՒ երկու ենթահամակարգերի հասանելիությունը շատ ցածր է միջազգային միջինից: Հասանելիության հետ կապված խնդիրները չեն սահմանափակվում միայն ՄԿՈՒ-ով, այլ նաև տարածվում են մեծահասակների ուսուցման այլ հնարավորությունների վրա: Մարտահրավեր ներկայացնող հիմնական գործոնը արդեն իսկ առկա ՇՄԿՈՒ հասանելիությունն ու գրավչությունը խթանող խելամիտ օրենսդրական դաշտի իրականացմանն աջակցող քաղաքականությունների բացակայությունն է:
- **Որակ և մասնակցություն.** Հայաստանում ՄԿՈՒ համակարգը իր շահառուներին առաջարկում է միայն միջին որակ՝ երիտասարդների և մեծահասակների միջև հմտությունների և կարողությունների որակի կտրուկ անհամապատասխանություններով: Անկախ տարիքից, Հայաստանում ՄԿՈՒ սովորողները կարող են ակնկալել հաջող մասնակցություն և ուսման ավարտ, ՄԿՈՒ և հանրակրթական զուգահեռ ուղիների միջև անցումը կարծես թե ավելի հեշտ է, քան այլ երկրներում: Այնուամենայնիվ, ՄԿՈՒ ուսանողները իրենց ուսումը զգալիորեն ավելի շատ են կիսատ թողում, եթե համեմտական տանենք հանրակրթության սովորողների հետ:
- **Սովորողների արդյունքներն աշխատաշուկայում.** Հայաստանում ՄԿՈՒ շատ ծրագրեր չունեն համապատասխան կապեր աշխատաշուկայի հետ, ինչը բացասաբար է անդրադառնում ՄԿՈՒ շրջանավարտների աշխատունակության վրա: Կարիերայի ուղղորդումը կարող է զգալիորեն ամրապնդել այս կապը: Հետաքրքիր է, որ Հայաստանի ՄԿՈՒ ծրագրերը որոշ չափով ավելի համապատասխանեցված են աշխատաշուկայի կարիքներին, քան այլ երկրների ծրագրերը միջինում, ինչը, հավանաբար պայմանավորված է ՄԿՈՒ ծրագրերը կատարելագործման նպատակով աշխատաշուկայի կարիքները և սոցիալ-տնտեսական զարգացումներն ուսումնասիրող շարունակական մեխանիզմների առկայությամբ, ինչպես տեղեկացնում են ազգային իշխանությունները:
- **Նորարարություն.** Հայաստանի իշխանությունները միայն վերջերս են սկսել գերազանցությունն ու նորարարությունը դարձնել իրենց ռազմավարական պլանավորման առաջնահերթություն, որն ապացուցված մոտեցում է Թուրինի գործընթացում և ԵՄ այլ երկրներում: Ներկայումս այդ ուղղությամբ ձեռնարկվում են միջոցներ, ինչպիսիք են հաստատությունների վերակազմավորումը, դուալ /երկակի/ կրթության ընդլայնումը, աշխատանքի վրա հիմնված ուսուցման հնարավորությունների ընդլայնումը, ՄԿՈՒ չափորոշիչների թարմացումը և միջազգային նորմերին համապատասխան որակի ապահովման համակարգի ներդրումը: Այս ջանքերը դեռ փոփոխությունների նախաձեռնման մեկնարկային փուլում են, և դրանց ազդեցությունը դեռևս տեսանելի չեն:
- **Համակարգի կառավարում և կազմակերպում.** Հայաստանի ՄԿՈՒ համակարգը բախվում է տվյալների հավաստիության, շահագրգիռ կողմերի մասնակցության և որակի ապահովման հետ կապված խնդիրների հետ, ինչն ազդում է ընդհանուր հաշվետվողականության վրա: Չնայած այս բացերը հաղթահարելուն ուղղված նախաձեռնողական միջոցառումներին, խնդիրները պահպանվում են մասնավորապես անբավարար ֆինանսական ռեսուրսների պատճառով, որն իր հերթին բերում է ենթակառուցվածքային թերություններին և չափանիշներին չհամապատասխանող կրթական և ուսումնական նյութերին: Դրական կողմն այն է, որ ՄԿՈՒ համակարգը ցուցադրում է անձնակազմի արհեստավարժության համեմատաբար բարձր մակարդակ և բաց է միջազգային համագործակցության և փոխադարձ ուսումնառության համար:
- **Մոնիտորինգի տվյալների որակ և հուսալիություն.** Հայաստանի մոնիտորինգի արդյունքները միջինում միջազգայինորեն ավելի քիչ համեմատելի են, քան այլ երկրների արդյունքները, ինչպես նաև միջազգային համեմատության մեջ նրանք ավելի են հակված կողմնակալության: Այնուամենայնիվ, Հայաստանը հակված է միջինում ավելի քանադատաբար ինքնազնադատել իր ՄԿՈՒ համակարգի կատարողականը, քան այլ երկրները:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Մոնիտորինգի հիմնական նպատակը և շրջանակը

Սույն զեկույցն ամփոփում է Հայաստանում ՄԿՈՒ համակարգի կատարողականության մոնիտորինգի արդյունքները, որոնք սկսվել են Թուրինի գործընթացի համատեքստում 2022 թվականին և ավարտվել 2023 թվականին:¹ «Կատարողականությունը» նկարագրում է, թե որքանով է ՄԿՈՒ համակարգը կատարում մի շարք թիրախավորված ազգային և միջազգային պարտականություններ (պարտավորվածություններ) սովորողների և այլ շահագրգիռ կողմերի նկատմամբ՝ ի պաշտպանություն ցկյանս ուսումնառության (ցկյանս ուսումնառություն՝ ՑՈՒ): «ՄԿՈՒ համակարգը»² վերաբերում է երկրում առկա հաստատությունների, մարդկանց, քաղաքականությունների, պրակտիկաների, ռեսուրսների և մեթոդաբանությունների ցանցին և այն ձևին, որով դրանք կազմակերպվում են ցանկացած տարիքի անհատներին որոշակի աշխատանքների, արհեստների կամ մասնագիտությունների համար անհրաժեշտ գործնական հմտությունների, գիտելիքների և կարողությունների տրամադրման նպատակով:

Մոնիտորինգի հիմնական նպատակն է ուսումնասիրել նախնական և շարունակական ՄԿՈՒ (ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ) ներդրումը երիտասարդների և մեծահասակների ուսումնական գործունեության մեջ ցանկացած ուսումնական միջավայրում (ֆորմալ և ոչ ֆորմալ)³ նպատակաուղղված բարելավելու նրանց գիտելիքները, հմտությունները, կարողությունները և որակավորումները՝ անձնական, սոցիալական և/կամ մասնագիտական նկատառումներով: Թուրինի գործընթացի մոնիտորինգի գործընթացի նպատակն է տրամադրել վստահելի հիմք որոշումներ կայացնողներին, պրակտիկ աշխատողներին և շահագրգիռ կողմերին քաղաքականությունների բարելավման, ռեսուրսների բաշխման, ռազմավարության նախագծման և հետագա վերլուծությունների համար ցկյանս ուսումնառությանն աջակցելուն ուղղված տեղեկացված որոշումների համար:

Զեկույցի հիմքում ընկած մոնիտորինգի շրջանակը ընդգրկում է ցկյանս ուսումնառողների նկատմամբ պարտավորությունների երեք հիմնական ոլորտներ՝ ուսուցման հասանելիություն (Ոլորտ A), ուսուցման որակ (Ոլորտ B) և համակարգի կազմակերպում (Ոլորտ C): Այս ոլորտները բաժանված են մոնիտորինգի ութ չափայնությունների. հասանելիություն և մասնակցություն ոլորտ A-ում, որակ, համապատասխանություն, գերազանցություն և նորարարություն ոլորտում B-ում, և համակարգի կառավարում/վարչարարություն և ռեսուրսներ ոլորտ C-ում: Այս ոլորտներում և դրանց չափորոշիչներում Թուրինի գործընթացը հետևում է համակարգի ընդհանուր առմամբ 30 վերջնարդյունքների /արդյունք/³, մասնավորապես թե որքանով են տվյալ վերջնարդյունքների հասնում և որքան արդար են դրանք բախշված սովորողների տասներեք խմբերի միջև՝ ըստ նրանց տարիքի, սեռի, սոցիալ-տնտեսական ծագման, աշխատաշուկայի և միգրացիայի կարգավիճակի և ուսումնառության բնորոշ միջավայրի:

Մոնիտորինգը տեղեկատվություն է տրամադրում համակարգի կատարողականի ցուցիչի (SPI) տեսքով այս արդյունքներից յուրաքանչյուրի և սովորողների խմբերի համար յուրաքանչյուր երկրի

¹Թուրինի գործընթացը մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) բազմամյա վերանայում է Արևելյան և Հարավ-Արևելյան Եվրոպայի (Ներառյալ Թուրքիան), Կենտրոնական Ասիայի և Հարավային և Արևելյան Միջերկրական տարածաշրջանի երկրներում, որն սկսած 2010թ. կանոնավոր կերպով իրականացնում է ԵԿՀ-ն՝ համագործակցելով այս տարածաշրջանների երկրների հետ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ <https://www.etf.europa.eu/en/what-we-do/torino-process-policy-analysis-and-progress-monitoring>

²Սույն զեկույցում գործածվող «ՄԿՈՒ», «ՄԿՈՒ համակարգ» և «համակարգ» եզրույթները համարժեք են:

³ Սույն զեկույցում գործածվող «արդյունքներ», «եյթ» և «վերջարդյունքներ» եզրույթներն համարժեք են:

ընդհանուր առմամբ 82 ցուցիչների մասով:⁴ SPI-ները կարող են տատանվել 0-ից մինչև 100, որտեղ 100-ը ցույց է տալիս առավելագույն կամ լավագույն կատարողականը: Ցուցանիշները նկարագրում են ՄԿՈՒ համակարգի կատարողականը ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման միջավայրերում երիտասարդների և մեծահասակների, կանանց և տղամարդկանց, անապահով սովորողների, երկարաժամկետ գործազուրկ աշխատանք փնտրողների, տնտեսապես ոչ ակտիվ բնակչության և առաջին սերնդի միգրանտների համար:

Այս զեկույցը ներկայացնում է վերոնշյալ ցուցիչների մոնիտորինգի հիմնական արդյունքները հետևյալ կերպ. ընդհանուր կատարողականությունը մոնիտորինգի լայն չափայնությամբ (Բաժին 2.1), կատարողականությունն ըստ կոնկրետ տարածքի և համակարգի (Բաժին 2.2 և ենթաբաժիններ) և սովորողների հատուկ խմբերի աջակցման կատարողականը (Բաժին 2.3): Չեկույցը նաև ներկայացնում է այս արդյունքների միջազգային միջին միավորը⁵ հղման նպատակներով, և, անհրաժեշտության դեպքում, այն ցուցադրում է որոշ տարանջատված տվյալներ, որոնք օգտագործվում են համակարգի կատարողականի ցուցիչները հաշվարկելու համար: Հայաստանի և Թուրքիի գործընթացի մոնիտորինգի շրջանակի և մեթոդաբանության ամբողջական տվյալների հղումները կարելի է գտնել այս փաստաթղթի երրորդ և վերջին բաժիններում:

1.2 Մոնիտորինգի տվյալների համեմատելիությունը և հուսալիությունը

Մոնիտորինգի այս զեկույցի տվյալները հավաքագրվել և վերլուծվել են մի քանի փուլով՝ 2022թ. սեպտեմբերից մինչև 2023թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում: Մոնիտորինգի շրջանակում ընդգրկված համակարգի յուրաքանչյուր արդյունքի և սովորողների խմբերից յուրաքանչյուրի համար միջազգայնորեն համադրելի ցուցանիշների հավաքագրման սկզբնական փուլից հետո ԵԿԳ-ն կազմել է լրացուցիչ հարցաթերթ Հայաստանի ազգային իշխանությունների և շահագրգիռ կողմերի համար՝ տեղեկատվություն հավաքելու այն արդյունքների և սովորողների խմբերի մասին, որոնց դեպքում նման ցուցանիշները բացակայում էին: Հարցաթերթի պատասխանները քանակականացվել են և ինտեգրվել մոնիտորինգի մնացած տվյալների հետ խառը տվյալների շտեմարանում, որն այնուհետև օգտագործվել է այս զեկույցում ներկայացված համակարգի կատարողականի ցուցանիշները հաշվարկելու համար:


Ի լրումն համակարգի գործունեության մասին հաղորդագրությունների, մոնիտորինգը նաև տեղեկատվություն է տրամադրում յուրաքանչյուր երկրի արդյունքների միջազգային համադրելիության վերաբերյալ, թե որքանով այդ արդյունքները կարող են խոցելի լինել սուբյեկտիվության առումով և որքանով է ինքնաքննադատ երկիրը, երբ տեղեկատվություն է ներկայացնում իր քաղաքականության և համակարգի կատարողականի մասին արտաքին մոնիտորինգի նպատակներով: Դա հնարավոր է, քանի որ մոնիտորինգի մեթոդաբանությունը նախատեսում է ճշգրիտ գրառումներ պահել տվյալների առկայության, ծագման և տեսակի վերաբերյալ, որոնք օգտագործվում են կատարողականի 82 ցուցիչների և համապատասխան արդյունքների հաշվարկման համար յուրաքանչյուր երկրի՝ ներառյալ Հայաստանի համար:

⁴Հազվագյուտ դեպքերում, երբ տվյալները բացակայում են, երկրի համար SPI-ների թիվը կարող է ավելի պակաս լինել:


⁵«Միջազգային միջինը» վերաբերում է Թուրքիի գործընթացին մասնակցող երկրների միջինին: Մոնիտորինգի սույն զեկույցի պատրաստման պահին որոշ երկրների համար տվյալների հավաքագրումը դեռ շարունակվում էր: Քանի որ լրացուցիչ երկրները ավարտում են մոնիտորինգը, այս զեկույցում ներկայացված միջազգային միջին ցուցանիշները կարող են փոփոխվել:

**ՆԿԱՐ 1: ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՀԱՄԵՍԱՏԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՀԵՏԵՎԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆ (2023)**


Արդյունքների միջազգային համադրելիություն (0=նվազագույն համեմատելի, 100=լիովին համեմատելի)



Համակարգի կատարողականի հետ կապված կողմնակալության/տուրյեկտիվության ռիսկ (0=առավելագույն ռիսկ, 100=նվազագույն ռիսկ)



Համակարգի կատարողականի վերաբերյալ ինքնաքննադատ լինելու միտում (առավել քննադատական=0, չեզոք=50, սակավ քննադատական=100)



0-ից (նվազագույն միջազգային համադրելի) մինչև 100 (ամբողջովին միջազգային համադրելի) սանդղակով մոնիտորինգի արդյունքների ընդհանուր համադրելիությունը Հայաստանի համար 100-ից 22,6-ն է, ինչը ցածր է, երբ համեմատվում է Թուրիսի գործընթացի մոնիտորինգի մասնակցած այլ երկրների միջինի հետ: Հայաստանի արդյունքները միջազգային համեմատության մեջ նաև առավել ենթակա են կողմնակալության, ինչը դրսևորվում է որպես ՄԿՈՒ համակարգի կատարողականի նկատմամբ ավելի ինքնաքննադատ լինելու միտում, քան այլ երկրները միջինում: Ինչպես ցույց է տրված Նկար 1-ում, 0-ից (առավել քննադատական) 50 (չեզոք) և մինչև 100 (նվազագույն քննադատական) սանդղակով Հայաստանի գնահատականը 100-ից 35,9 է՝ 52,8 միջազգային միջինի հետ համեմատած:

2. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆ

2.1 Քաղաքականության և համակարգի արդյունավետությունը 2023 թվականին. ընդհանուր արդյունքներ

Թուրիսի գործընթացի մոնիտորինգը հիմնված է բազմաթիվ, հաճախ տարբեր տեղեկատվական աղբյուրների և տվյալների վրա: Հիմնական ուղերձների արագ, արդյունավետ և նպատակաուղղված հաղորդակցությունը հեշտացնելու համար, չնայած հավաքագրված տեղեկատվության բազմազանությանը, մոնիտորինգի արդյունքների հաշվետվությունը միավորում է տվյալներն այնպես, որ հեշտացնի համակարգի կատարողականի արագ ամփոփումը՝ առանց չափազանց շատ մանրամասներ զոհաբերելու:

Նախորդ բաժնում նշված մոնիտորինգի ութ չափորոշիչներն այս առումով հաշվետվության վերին մակարդակն են: Նրանք արտացոլում են ՄԿՈՒ համակարգի կատարողականը տարբեր չափայնություններում, որոնց ընտրությունը համահունչ է երկրների ազգային և միջազգային պարտավորություններին և ուսուցման հետ կապված բարեփոխումների ու զարգացման առաջնահերթություններին: Այս ութ չափորոշիչները նկարագրվում են հետևյալ կերպ.

**ԱՂՅՈՒՄԱԿ 1: ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ
ՀԱՓՈՐՈՇԻՉԵՐԸ ԹՈՒՐԻՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԻՋՈՑՈՎ**


Չկա:	Չափորոշիչ	Նկարագրություն
1	Ուսուցման հասանելիություն	Այս չափորոշիչը ցույց է տալիս, թե որքանով են սկզբնական ՄԿՈՒ (ՆՄԿՈՒ)-ն, շարունակական ՄԿՈՒ (ՇՄԿՈՒ)-ն և մեծահասակների ուսուցման այլ հնարավորությունները, որոնց կարող է նպաստել ՄԿՈՒ-ն, հասանելի և գրավիչ սովորողների համար՝ անկախ նրանից, թե ովքեր են նրանք և ինչու են նրանք ցանկանում ներգրավվել ուսման մեջ:
2	Մասնակցություն ուսուցմանը	Այս չափորոշիչը ցույց է տալիս ՄԿՈՒ սովորողների՝ կրթության և վերապատրաստման համակարգում գոյատևելու և հաջողության հասնելու հավանականությունը՝ դիտարկելով դրա ուղղահայաց և հորիզոնական թափանցելիությունը, այսինքն՝ արդյոք սովորողները կարող են անցնել ընդհանուր և մասնագիտական ուղիների, ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման միջև, ինչպես նաև՝ արդյոք նրանք ավարտում են իրենց ուսումը:
3	Որակ և համապատասխանություն	Այս չափորոշիչը ցույց է տալիս, թե որքանով են ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ ուսուցում ստացողներին տրամադրվում հիմնական հմտություններ և հիմնական կարողություններ, արդյոք նրանց ուսումը համապատասխանում է աշխատանքին և առնչվում է աշխատանքին, ինչպես նաև՝ արդյոք նրանց տրվում է համապատասխան կարիերայի ուղղորդում:
4	Գերազանցություն	Այս չափորոշիչը ներառում է համակարգային քաղաքականությունների և միջոցառումների առկայությունը՝ ուսուցման և վերապատրաստման, բովանդակության ձևավորման և տրամադրման, կառավարման և ՄԿՈՒ ղեկավարման, ինչպես նաև արդարության և սոցիալական ներառման ամենաբարձր որակի պրակտիկաների և արդյունքների խթանման համար:
5	Նորարարություն	Այս չափորոշիչը արտացոլում է նորարարական պրակտիկաների և առաջնահերթությունների առկայությունը համակարգի մակարդակում՝ ուսուցման հասանելիության, ուսուցման հաջող ավարտին աջակցելու և ուսուցման և վերապատրաստման արդյունքների որակի ոլորտներում:
6	ՄԿՈՒ համակարգի արձագանքումը	Այս չափորոշիչը ցույց է տալիս, թե որքանով են երիտասարդների և մեծահասակների ուսումնական ծրագրերը հաշվի առնում կայունության, կլիմայի փոփոխության իրազեկման և թվայնացման համար կարևոր թեմաներ, ինչպես նաև արդյոք ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ համակարգերը արձագանքում են աշխատաշուկայի կարիքներին, ժողովրդագրական փոփոխություններին և սոցիալ-տնտեսական զարգացումներին:
7	Ղեկավարություն և կառավարում	Այս չափորոշիչը արտացոլում է տեղեկացված որոշումների կայացման համար ապացույցների առկայությունը, ՄԿՈՒ-ի կառավարման մասնակցության աստիճանը, որակի ապահովման պայմանավորվածությունների առկայությունը և թափանցիկությունը, ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձնակազմի որակն ու կարողությունները, ինչպես նաև ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ միջազգայնացման աստիճանը :
8	Ռեսուրսներ	Այս չափորոշիչը արտացոլում է ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ մարդկային և ֆինանսական ռեսուրսների համարժեքությունն ու արդյունավետությունը, և որքանով է ուսուցման և վերապատրաստման նյութական բազան համարժեք, այսինքն՝ նպաստում է արդյունավետ ուսուցմանը, վերապատրաստմանը և ուսմանը:

Մոնիտորինգի հաշվետվության այս բաժինը ներկայացնում է Հայաստանի համակարգի կատարողականը մոնիտորինգի և համակարգի գործունեության այս ութ չափորոշիչներում:

Հայաստանում ՄԿՈՒ-ն հատկապես մեծ հաջողությամբ է ապահովում, որպեսզի աշակերտները, ինչպես երիտասարդ, այնպես էլ մեծահասակ, ունենան համակարգում մնալու և ուսումը հաջողությամբ ավարտելու ավելի հիմնավոր հեռանկարներ (Չափայնություն A.2): Համակարգի արձագանքումը արտաքին զարգացումներին և կարիքներին (Չափայնություն B.4), ինչպիսիք են,

օրինակ, աշխատաշուկայից եկողները, նույնպես միջինից բարձր է այլ երկրների համեմատ (Նկար 2):

ՆԿԱՐ 2: ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻՆԴԵՔՆԸ ԸՍՏ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՉԱՓՈՐՈՇՉԻ, ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆ (2023)



Տեսական⁶ ցուցիչի միջակայք՝ նվազագույն/ցածր կատարողականություն=0, առավելագույն/բարձր կատարողականություն=100

Աղբյուրը՝ Թուրքիայի գործընթացի մոնիտորինգի տվյալների բազա

Չնայած հաջողության նման խոստմանը, Հայաստանում, ինչպես մյուս երկրներում, գործում է ՄԿՈՒ համակարգ, որը շարունակում է մնալ առավել քիչ գրավիչ տարբերակ ապագա սովորողների համար՝ այլ կրթական և վերապատրաստման ուղիների հետ համեմատած: Փաստորեն, ընդամենը 23 SPI-ի դեպքում հասանելիությունը և գրավչությունը (Հափայնություն A.1) քաղաքականության և համակարգի կատարողականի ամենաթույլ տիրույթն է երկրում: ՄԿՈՒ համակարգը վատ է ապահովված նաև ֆինանսական և մարդկային ռեսուրսների առումով (Հափայնություն C2): Թեև շատ այլ երկրներ բախվում են այս խնդիրներին, Հայաստանում խնդիրը, ըստ երևույթին, ավելի սուր մտահոգության տեղիք է տալիս, ինչպես օրինակ ՄԿՈՒ և մեծահասակների համար ուսուցման այլ վայրերի միջոցով տրամադրվող ուսուցման ոչ օպտիմալ որակն ու համապատասխանությունը (Հափայնություն B.1):

Այս գեկուլցի պատրաստման ընթացքում հավաքված տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանի իշխանություններն ու շահագրգիռ կողմերը տեղյակ են այս խնդիրների մասին և ակտիվորեն լուծում են դրանք:⁷ Այնուամենայնիվ, նրանք կարծես թե առաջնահերթություն չեն տալիս այն

⁶Թուրքիայի գործընթացը տարբերակում է տեսական ինդեքսի միջակայքը և հաշվետվության նպատակներով օգտագործվող ինդեքսի միջակայքը: Հաշվետվության նպատակով ծայրահեղ արժեքների հազվադեպ դեպքերը ինդեքսի աստիճանի ստորին ծայրում (SPI < 10) և վերին ծայրում (SPI > 90) կրճատվում են վերին (10) և ստորին (90) դեցիլային եզրերում: Սա նշանակում է, որ հաշվետվությունը խտրականություն չի դնում 10-ից ցածր և 90-ից բարձր SPI արժեքների միջև:

⁷ Աղբյուրը՝ 2023 Հայաստանի Թուրքիայի գործընթացի ինքնազննահատման հարցաշար:

քաղաքականություններին և գործելակերպերին, որոնք մասնավորապես ուղղված են ամենաբարձր որակին (գերազանցությանը) և նորարարական կամ առավել լավ գործելակերպերին (նորարարություն) (Չափայնություններ B.2 և B.3): Թուրինի գործընթացի այլ երկրների, ինչպես նաև ԵՄ երկրների փորձը ցույց է տալիս, որ գերազանցության և նորարարության խթանմանն ուղղված ջանքերի համախմբումն ու առաջնահերթություն տալը կարող են օգնել բարելավել համակարգի աշխատանքը այնպիսի հիմնական ոլորտներում, ինչպիսիք են հասանելիությունը և որակը:

2.2 Քաղաքականության և համակարգի կատարումը մոնիտորինգի հատուկ ոլորտներում և հաշվի առնելով կոնկրետ արդյունքները

ՄԿՈԻ կատարողականը Հայաստանում վերը ներկայացված մոնիտորինգի ութ չափորոշիչներում պայմանավորված է քաղաքականության և համակարգի 30 արդյունքներով: Այս արդյունքների շնորհիվ է, որ ՆՄԿՈԻ և ՇՄԿՈԻ ենթահամակարգերը աշխատում են շահագրգիռ կողմերի, հատկապես երիտասարդների և մեծահասակ սովորողների կարիքներն ու ակնկալիքները բավարարելու համար: Մոնիտորինգի հաշվետվության այս բաժինը ներկայացնում է այս արդյունքների մակարդակով համակարգի կատարողականի վերաբերյալ արդյունքները:

Սույն զեկույցի ընթերցումը և կողմնորոշումը հեշտացնելու նպատակով բաժինը խմբավորում է 30 արդյունքներն ըստ սովորողների պարտավորության երեք հիմնական ոլորտների, որոնք ներկայացվել են այս զեկույցի առաջին բաժնում. ուսուցման հասանելիություն (Ոլորտ A), ուսուցման որակ (Ոլորտ B), և համակարգի կազմակերպում (Ոլորտ C): Ոլորտ B-ի հաշվետվությունները, որոնք ամենամեծն են արդյունքների քանակով, բաժանված են երկու ենթաօլորտի՝ B(1) և B(2):

2.2.1 Ոլորտ A. ցկյանս ուսումնառության հնարավորություններ՝ հասանելիություն և մասնակցություն

Ոլորտ A-ում (Հասանելիություն և մասնակցություն ՑՈԻ-ի հնարավորություններին), Թուրինի գործընթացը հետևում է Բաժին 2.1-ում ներկայացված մոնիտորինգի առաջին երկու չափորոշիչներին՝ հասանելիություն/գրավչություն և մասնակցություն՝ համակարգի վեց արդյունքներով: Այս արդյունքները ներառում են հասանելիություն ՆՄԿՈԻ, ՇՄԿՈԻ և ցկյանս ուսումնառության այլ հնարավորություններին, ՄԿՈԻ համակարգի ուղղահայաց և հորիզոնական թափանցելիություն, ինչպես նաև ՆՄԿՈԻ և ՇՄԿՈԻ սովորողների՝ ավարտելու և, անհրաժեշտության դեպքում, կրթության հետագա մակարդակներում առաջադիմելու հեռանկարներ և վերապատրաստում: Արդյունքները, որոնք ներառված են ոլորտում A-ում, սահմանվում են հետևյալ կերպ.

ԱՐՅՈՒՄԱԿ 2: ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՆԵՐԱՌՎԱԾ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ A ՈԼՈՐՏՈՒՄ. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կոդ	Արդյունք (եք)	Նկարագրություն
A.1.1	Հասանելիություն և գրավչություն. Նախնական ՄԿՈՒ	Այս արդյունքը ցույց է տալիս, թե որքանով է նախնական ՄԿՈՒ-ն գրավիչ կրթական ընտրություն՝ համեմատած ուսուցման այլընտրանքների հետ, և արդյոք այդ ընտրությունը հասանելի է սովորողների տարբեր թիրախային խմբերի համար:
A.1.2	Հասանելիություն և գրավչություն. շարունակական ՄԿՈՒ	Այս արդյունքը ցույց է տալիս, թե որքանով է շարունակական ՄԿՈՒ-ն գրավիչ ընտրություն՝ համեմատած հմտությունների զարգացման այլ այլընտրանքների հետ, ինչպես նաև, թե արդյոք այդ ընտրությունը հասանելի է տարբեր թիրախային խմբերի համար:
A.1.3	Հասանելիություն դեպի այլ հնարավորություններ՝ ՑՈՒ-ի համար	Այս արդյունքը ներառում է ցկյանս ուսումնառության այլ հնարավորությունների հասանելիություն, որոնք չեն ընդգրկված A.1.1 և A.1.2 և ՄԿՈՒ արդյունքներով, ինչպիսիք են ակտիվ աշխատաշուկայի քաղաքականությունը (ԱՄԶ):
A.2.1	Ճկուն ուղիներ՝ ուղղահայաց թափանցելիություն	Այս արդյունքը ձգտում է ֆիքսել կրթության և վերապատրաստման համակարգի ուղղահայաց թափանցելիությունը նախնական և շարունակական ՄԿՈՒ-ի նկատմամբ, որը հասկացվում է որպես կրթության և վերապատրաստման (ընդհանուր և մասնագիտական) հաջորդական ուղիների միջև անցում կատարելու հնարավորություն:
A.2.2	Ճկուն ուղիներ՝ հորիզոնական թափանցելիություն	Այս արդյունքը ձգտում է ֆիքսել կրթության և վերապատրաստման համակարգի հորիզոնական թափանցելիությունը նախնական և շարունակական ՄԿՈՒ-ի նկատմամբ, որը հասկացվում է որպես կրթության և վերապատրաստման զուգահեռ ուղիների (ընդհանուր և մասնագիտական) և ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցման պարամետրերի միջև անցում կատարելու հնարավորություն:
A.2.3	Սովորողների առաջադիմություն և ավարտականացում	Այս արդյունքը վերաբերում է ՄԿՈՒ-ում սովորողների հաջողության (ավարտական, առաջադիմություն) աստիճանին, օրինակ՝ համեմատած այլ կրթության և վերապատրաստման այլընտրանքների հետ:

Այս զեկույցի նախորդ բաժնում խոսվեց այն մասին, որ հասանելիությունը և գրավչությունը Հայաստանի ՄԿՈՒ համակարգի առավել թույլ կատարողականի չափորոշիչներն են: Կատարողականության դիտարկումն ըստ կոնկրետ արդյունքի այդ չափայնության մեջ (Նկար 3) տալիս է ավելի շատ մանրամասներ, որոնք կարող են բացատրել արդյունքները այս ոլորտում:


Տվյալները ցույց են տալիս զգալի անհամապատասխանություն ՆՄԿՈՒ-ի և ՆԿՈՒ-ի միջև առ այն, թե որքանով սովորողները պատրաստ են օգտվել դրանցից (Արդյունքներ A.1.1 և A.1.2): Ինչպես այլ երկրներում, ՆՄԿՈՒ-ն շատ ավելի հասանելի և գրավիչ է թվում, քան ՇՄԿՈՒ-ն, սակայն Հայաստանում ՄԿՈՒ երկու ենթահամակարգերի հասանելիությունը շատ ցածր է միջազգային միջինից: ՄԿՈՒ հասանելիությունն ու գրավչությունը Հայաստանում մոնիտորինգի նաև ամենացածր ցուցանիշն է:

Մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ հասանելիության հետ կապված խնդիրները չեն սահմանափակվում միայն ՄԿՈՒ-ով, այլ նաև տարածվում են մեծահասակների ուսուցման այլ հնարավորությունների վրա (Արդյունք A.1.3), ինչպիսիք են աշխատաշուկայի ակտիվ քաղաքականության համատեքստում տրվածները: Սա ենթադրում է, որ Հայաստանում մեծահասակների կրթության հասանելիության թերությունները բացառապես ՄԿՈՒ ծրագրերի խնդիր չէ, այլ ավելի լայն խնդիր է, որը ազդում է երկրում մեծահասակների համար հասանելի ուսուցման մի շարք հնարավորությունների վրա:

Այս համատեքստում հատկապես ՇՄԿՈՒ-ի համար մարտահրավեր ներկայացնող հիմնական գործոնը արդեն իսկ առկա ՇՄԿՈՒ հասանելիությունն ու գրավչությունը խթանող խելամիտ օրենսդրական դաշտի իրականացմանն աջակցող քաղաքականությունների բացակայությունն է: Դրույթները ներառում են ծրագրերի մոդուլյարացում, սովորողների հատուկ խմբերի թիրախավորում և ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման մեխանիզմների

ներդրում:⁸ Մոնիտորինգի պահին վերջինս դեռ չէր գործում կարողությունների սակավության և ռեսուրսների սահմանափակության պատճառով:

ՆԿԱՐ 3: ՑՈՒ-Ի ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ - ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՆԴԵՔՍ, ՀԱՅԱՍՏԱՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՋԻՆ (2023)



Տեսական ցուցիչի միջակայք՝ նվազագույն/ցածր կատարողականություն=0, առավելագույն/բարձր կատարողականություն=100

Աղբյուրը՝ Թուրինի գործընթացի մոնիտորինգի տվյալների բազա

Այն սովորողները, ովքեր, այնուամենայնիվ, ընտրում են գրանցվել ՄԿՈՒ ծրագրում, կարող են ակնկալել օգտվել ՄԿՈՒ համակարգից, որը նրանց հնարավորություն կտա մասնակցել և հաջողությամբ ավարտել այն: ՄԿՈՒ սովորողների կատարողականը, ովքեր ցանկանում են շարունակել իրենց կրթությունը հանրակրթության հետագա մակարդակներում, մի փոքր ցածր է միջազգային միջինից (Արդյունք A.2.1), և զուգահեռ ՄԿՈՒ և ընդհանուր կրթության ուղիների միջև անցումը շատ ավելի հեշտ է թվում, քան միջին հաշվով այլ երկրներում: (Արդյունք A.2.2): Այդուհանդերձ, ազգային կրեդիտային համակարգի ավելի լավ կիրառումը էական նշանակություն կունենա սովորողների ուղիների առավել մեծ ճկունության համար:⁹

Երիտասարդ և մեծահասակ սովորողները, ովքեր ընդգրկված են ՄԿՈՒ ծրագրում, նույնպես ավելի քիչ հավանական է, որ ձախողվեն կամ դուրս մնան (Արդյունք A.2.3): 2021/2022¹⁰ թթ. (վերջին տարին է, որի համար տվյալները հասանելի են) 2, սովորողների առաջընթացը ՄԿՈՒ համակարգի կատարողականի ամենաուժեղ ոլորտներից մեկն է%-ից պակաս կրկնումների տեմպով և 75 SPI-ով: Այնուամենայնիվ, ՄԿՈՒ սովորողները դեռևս բախվում ենն ուսումը թողնելու ավելի բարձր ռիսկի, քան հանրակրթության իրենց հասակակիցները. 2021/2022թթ. ՄԿՈՒ համակարգում

⁸ Աղբյուրը՝ 2023 Թուրինի գործընթացի ինքնազնադատման հարցաշար Հայաստանի համար:

⁹ Աղբյուրը՝ 2023 Հայաստանի Թուրինի գործընթացի ինքնազնադատման հարցաշար:

¹⁰ Նույն տեղում:

ուսումնառությունից հրաժարվելու տոկոսը կազմել է 4.7%, մինչդեռ հանրակրթությունում սովորողների ընդամենը 0.05%-ն է դադարեցրել ուսումնառությունը:

2.2.2 Ոլորտ B (1). ցկյանս ուսումնառության արդյունքները՝ որակ և համապատասխանություն

Սոնիտորինգի Ոլորտ B-ն (ՑՈՒ-ի արդյունքների որակը և համապատասխանությունը) ներառում է Բաժին 2.1-ում ներկայացված ևս երկու չափայնություն. ՄԿՈՒ որակ (ներառյալ արդիականություն) և համապատասխանություն: Այս երկու չափայնությունները միասին ընդհանուր առմամբ ներառում են քաղաքականության և համակարգի ութ արդյունք: Այս արդյունքներն ընդգրկում են ՄԿՈՒ-ում երիտասարդների և մեծահասակների ուսուցման որակը հիմնական հմտությունների և կարողությունների առումով, ՄԿՈՒ սովորողների ծանոթությունը աշխատանքի աշխարհին, ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ շրջանավարտների աշխատունակությունը, նրանց համար կարիերայի ուղղորդման առկայությունը, ինչպես նաև ՄԿՈՒ-ում ուսուցման և վերապատրաստման բովանդակության համապատասխանությունը: Մյուս կողմից, արդիականության առումով մոնիտորինգը արձանագրում է ժողովրդագրական, աշխատաշուկայի և սոցիալ-տնտեսական զարգացումներին առաջարկող ՄԿՈՒ ծրագրի արձագանքումը, ինչպես նաև կանաչ և թվային անցմանը վերաբերող թեմաների ընդգրկումը ՄԿՈՒ ուսումնական ծրագրերում: Ոլորտ B (1)-ում ներառված արդյունքները սահմանվում են հետևյալ կերպ.

ԱՂՅՈՒՄԱԿ 3: ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՆԵՐԱՌՎԱԾ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ B ՈԼՈՐՏՈՒՄ (1). ՈՐԱԿ ԵՎ ՀԱՄԱԴԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոդ	Արդյունք	Նկարագրություն
B.1.1	Հիմնական իրավասություններ ՑՈՒ-ն համար, ուսումնառության արդյունքների որակ	Այս արդյունքը ցույց է տալիս, թե որքանով է կրթության և վերապատրաստման համակարգը հաջողության հասնում ֆորմալ կրթության (ներառյալ ՆՄԿՈՒ) սովորողների համար հիմնական հմտությունների և հիմնական կարողությունների տրամադրման հարցում, ինչպես սահմանված է կանոնավոր միջազգային հարցումներում և միջազգային գնահատումներում:
B.1.2	Մեծահասակների հմտություններ և իրավասություններ	Այս արդյունքը ցույց է տալիս, թե որքանով են աշխատունակ տարիքի մեծահասակները տիրապետում հիմնական հմտություններին և հիմնական կարողություններին, ինչպես ցույց են տալիս կանոնավոր միջազգային հարցումները:
B.1.3	Կապեր ուսուցման և աշխատանքի աշխարհի միջև	Այս արդյունքը արտացոլում է ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ ծրագրերի պրագմատիկ արդիականությունը աշխատանքի վրա հիմնված ուսուցմանը (ԱՅՈՒ) մասնակցության ուսվյալի և ԱՅՈՒ բաղադրիչ ներառող արդյունքներով/նպատակներով ծրագրերի միջոցով:
B.1.4	Սովորողների աշխատունակություն	Այս արդյունքը վերաբերում է ՑՈՒ-ն համար հնարավորությունների աշխատաշուկայի համապատասխանությանը, որը վերցված է ՆՄԿՈՒ-ի, ՇՄԿՈՒ-ի և ՄԿՈՒ բաղադրիչով ՑՈՒ-ն այլ ձևերի շրջանավարտների աշխատաշուկայի արդյունքների ապացույցների միջոցով:
B.1.5	Կարիերայի ուղղորդման հնարավորություններ	Այս արդյունքը ձգտում է ֆիքսել մասնագիտությունների և կրթական ծրագրերի վերաբերյալ արդի տեղեկատվության ժամանակին հասանելիությունը, ինչը թույլ է տալիս ՄԿՈՒ ապագա և ներկա ուսանողներին տեղեկացված որոշումներ կայացնել իրենց կրթության և աշխատանքի ուղիների վերաբերյալ:
B.4.1	Ուսումնական բովանդակության համապատասխանությունը. կանաչ անցում	Այս արդյունքը ցույց է տալիս, թե որքանով են երիտասարդների և մեծահասակների ուսումնական ծրագրերը համարում կարևոր կայունության և կլիմայի փոփոխության իրազեկման թեմաները, ներառյալ «կանաչ հմտություններ» կայուն տնտեսությունների համար:
B.4.2	Ուսուցման բովանդակության համապատասխանությունը. թվային անցում	Այս արդյունքը հետևում է, թե որքանով են երիտասարդների և մեծահասակների ուսումնական ծրագրերը ներառում թվայնացման առնչվող թեմաներ, և որքանով են սովորողներին տրամադրվում հիմնական թվային հմտությունները որպես արդյունք:
B.4.3	Ծրագրի առաջարկի արձագանքը	Այս արդյունքը ցույց է տալիս սկզբնական և շարունակական ՄԿՈՒ համակարգերի արձագանքման աստիճանը և արագությունը աշխատաշուկայի կարիքներին և ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական զարգացումներին վերաբերող այլ փոփոխություններին:

Բաժին 2.1-ում նշվել է, որ Հայաստանում ՄԿՈՒ-ն իր շահառուներին առաջարկում է որակի և համապատասխանության միայն միջին մակարդակ: Այնուամենայնիվ, կան զգալի տարբերություններ սովորողների երկու լայն խմբերի՝ երիտասարդների և մեծահասակների կողմից

տնտեսության մեջ հաջող մասնակցության համար անհրաժեշտ հիմնական հմտությունների և կարողությունների տիրապետման աստիճանի առումով: Ընդամենը 10 SPI-ի առկայության դեպքում երիտասարդների կողմից ուսուցման որակը և համապատասխանությունը կտրուկ ցածր է (Արդյունք B.1.1)¹¹ մարտահրավեր, որն ավելի է բարդանում նրանով, որ ՄԿՈՒ-ում ուսուցման որակի գնահատումը սահմանափակվում է ակադեմիական նվաճումներով և կրթական չափորոշիչներին համապատասխանությամբ:

Մյուս կողմից, Հայաստանում մեծահասակների հմտությունների և կարողությունների որակն ու համապատասխանությունը (Արդյունք B.1.2) կրթության և ուսուցման ամենաբարձր արդյունքների ոլորտներից է, ինչպես այլ ոլորտների, այնպես էլ այլ երկրների համեմատ միջինում: Սա ենթադրում է, որ Հայաստանում մեծահասակները, անկախ նրանից կրթություն են ստացել ազգային համակարգում, թե արտերկրում, ունեն ավելի մեծ թվով հիմնական հմտություններ և կարողություններ, միջինում քան Թուրքիայի գործընթացի ընտրանքի այլ երկրների իրենց հասակակիցները. հմտություններ, որոնք կարևոր են համարվում տեղեկատվական հարուստ հասարակություններում հաջողության հասնելու համար:

Ինչպես Թուրքիայի գործընթացին մասնակցող այլ երկրներում, ՄԿՈՒ-ի միջոցով տրամադրվող ուսուցման հնարավորությունները հաճախ ներառում են աշխատաշուկայի հետ թույլ կապեր ունեցող ծրագրեր, որոնք չափվում են այս ծրագրերում աշխատանքի վրա հիմնված ուսուցման բաղադրիչների չափով (Արդյունք B.1.3): Այս գործոնը նպաստում է մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) և ցկյանս ուսումնառության շրջանակներում երիտասարդ և մեծահասակ սովորողների միջինից ցածր զբաղվածությանը (Արդյունք B.1.4):

Կարիերայի ուղղորդումը հայկական ՄԿՈՒ-ում կարծես թե կառուցվածքավորված և հասանելի է տարբեր աղբյուրներով, որոնք տալիս են հարուստ տեղեկատվություն մասնագիտական կրթության և վերապատրաստման տարբերակների մասին, թեև կան բարելավման ենթակա ոլորտներ, հատկապես դասավանդման մեթոդների և ուսուցման ռեսուրսների վերաբերյալ մանրամասն պատկերացում կազմելու մասով (Արդյունք B.1.5):¹¹ Նման ծառայությունների առկայությունը և արդյունավետ կիրառումը, որոնք ուղղված են օպտիմալ կարիերայի և մասնագիտությունների բացահայտմանը և ուսումնասիրությանը, կարող են էապես ամրապնդել ՄԿՈՒ-ի և աշխատաշուկայի միջև կապը՝ միաժամանակ ուղղորդելով սովորողներին դեպի համապատասխան աշխատանքային փորձ ձեռք բերելու լավ հնարավորություններ: ՄԿՈՒ համակարգի այս ոլորտի շարունակականության ապահովումը շատ կարևոր է:


Թուրքիայի գործընթացի մոնիտորինգի շրջանակը գնահատում է ուսումնական բովանդակության համապատասխանությունը ոչ միայն անմիջական, այլև երկարաժամկետ տեսանկյունից: Այն մանրակրկիտ ուսումնասիրում է, թե որքանով են ուսումնական ծրագրերը միավորում ապագա առաջադեմ և նորահայտ միտումները, ինչպիսիք են թվային և կանաչ անցումները: Միևնույն ժամանակ, այն գնահատում է, թե որքանով են կրթական ծրագրերն արձագանքում ավելի հրատապ կարիքներին, ինչպիսիք են աշխատաշուկայի կարիքները:

Կատարողականության այս չափանիշությունում Հայաստանի ՄԿՈՒ համակարգը ոչ միանշանակ, բայց դեռ դրական ուղերձ է հաղորդում: Այն ցույց է տալիս միջին մակարդակի արդյունավետություն ուսումնական ծրագրերում կանաչ անցումը որպես թեմա դիտարկելու հարցում (Արդյունք B.4.1), և ավելի լավ արդյունք՝ թվային անցմանը վերաբերող բովանդակություն ներառելու հարցում (Արդյունք B.4.2): Կանաչ անցման համապատասխանությունը ուսումնառության արդյունքի մեջ ավելի թույլ արդյունք ունի՝ համեմատած միջազգային միջինի հետ, սակայն թվային անցման վրա շեշտը, ըստ երևույթին, շատ ավելի բարձր է, քան միջինում Թուրքիայի գործընթացին մասնակցող

¹¹ Աղբյուրը՝ 2023 Թուրքիայի գործընթացի ինքնագնահատման հարցաշար Հայաստանի համար:

